

## ԱՊՐԵԶԱՆ. ՆՈՐ ՄԱՐՏԱՅՐԱՎԵՐՆԵՐ ԽXI ԴԱՐՈՒՄ

**Հայկ Ղեմոյան**

2001թ. սեպտեմբերի 11-ին ԱՄՆ-ի դեմ իրականացված հարձակումներից հետո միջազգային ահարեկչության դեմ հայտարարված պատերազմում կարևոր դերակատարություն է հատկացվել նաև կովկասյան տարածաշրջանին: Տարածաշրջանի երկրներից Վրաստանը և Ադրբեյջանը, կառուցվածքային ուրույն առանձնահատկությունների հետ միասին, ունեն նաև շատ ընդհանուր գժեր: Սասնավորապես, այս երկու երկրների ներքին եւ արտաքին ոլորտներում տարվող քաղաքականությունը մեծապես պայմանավորված է հզոր տերությունների՝ այդ հարցերին ունեցած մոտեցումներով:

### **1. Սեպտեմբերի 11-ը և դրա արձագանքները Ադրբեյջանում**

2001թ. սեպտեմբերի 11-ին ԱՄՆ-ի դեմ իրականացված՝ իր նախադեպը չունեցող ահարեկչական հարձակումները և ուղղակի, և անուղղակի կերպով կապված էին նաև Ադրբեյջանի հետ: Բանն այն է, որ դեռ դարադայան պատերազմի տարիներին Ադրբեյջանում էին հաստատվել տարբեր կորոնական-ծայրահեղական կազմակերպություններ, որոնք հետագայում մաս կազմելով միջազգային ահարեկչական ցանցին, ակտիվորեն ներգրավվեցին ԱՄՆ-ի դեմ իրականացված ահարեկչական գործողություններին: Այսպես, 1998թ. Տանգանիայում և Քենիայում ամերիկյան դեսպանատների դեմ կազմակերպված հարձակումները ուղղորդել ու դեկավարել են Ադրբեյջանի տարածքում գործող և Ուսանաբեն Լադենի ահարեկչական ցանցին պատկանող կառույցները: Այդ մասին են վկայում Հետաքննությունների դաշնային բյուրոյի կողմից գրանցված մի քանի տասնյակ հեռախոսազրույցները նշյալ ահարեկչական գործողությունների կազմակերպիչների և իրականացնողների միջև:

Անհրաժեշտ է նշել, որ ադրբեյջանական ուժային կառույցները շարունակաբար համապատասխան քայլեր են ձեռնարկել հանրապետության տարածքում հաստատված բազմաթիվ բարեգործական և կրոնական կասկածելի կազմակերպությունների դեմ: Մասնավորապես, 1999թ. ձերբակալվեցին ահարեկչական համարվող «Զեյշուլլահ» կազմակերպության 14 անդամներ, իսկ 2001թ. դատական կարգով ապացուցվեց նաև մեկ այլ՝ «Դիզբ ուտ-Թահրիր» կազմակերպության վեց անդամների կողմից Բաքվում ԱՄՆ-ի դեսպանատան դեմ ահարեկչական գործողություն իրականացնելու մտադրությունը: Նույն ժամանակահատվածում, միջազգային ահարեկչական ցանցի հետ հանգործակցության կասկածանքով, Ադրբեյջանի Հանրապետության տարած-

քում արգելվեց ևս վեց, այդ թվում՝ «Էլ-Յարանեյն», «Միջազգային բարեգործական կող», «Միջազգային բարեգործական իիմնադրամ», «Իւլամի ժառանգության վերածնունդ» բարեգործական կազմակերպությունների գործունեությունը, որոնց տասնյակ անդամներ արտաքսվեցին Ադրբեյջանից [1]:

Բաքվի իշխանությունները, իրապարակային դատավարությունների իրականացնելով մի շարք իսլամիստական կազմակերպությունների դեմ, ջանադրաբար փորձում են ներկայանալ որպես ԱՄՆ-ի դաշնակից և հակաահարեկչական ծրագրի ջատագով: Միջազգային ահարեկչության դեմ պայքարող պետության կերպարի ձևավորման նպատակով, պաշտոնական Բաքուն զգալի զիջումների գնաց նաև չեչեն գրոհայինների հարցում. ՈԴ-ին հանձնվեց Ադրբեյջանի տարածքում ապաստանած չեչեն գրոհայինների փոքրաքանակ մի խմբավորում:<sup>1</sup>

Ծնորհիվ նմանօրինակ գործողությունների՝ Բաքվին հաջողվեց հասնել հայտնի «Ազատության աջակցման 907-րդ ուղղման» բանաձևի նախ մեկ տարիով կասեցմանը, ապա և համապատասխան որոշման անժամկետ երկարաձգմանը: Սա, անտարակույս, կարելի է որակել իբրև ադրբեյջանական դիվանագիտության կարևոր, բայց ոչ վերջնական հաղթանակ: Օգտվելով ԱՄՆ-ի աջակցությունից և շահարկելով նավթային խաղաքարտը, Բաքուն հետայսու ջանքեր կգործադրի ահարեկչական կազմակերպություններ ունեցող երկրների շարքից հեռանալու ու հընթացս ՀՀ-ն և ԼՂՀ-ն այդպիսի երկրների շարքը դասելու ուղղությամբ:

## **2. Սոցիալական իրավիճակը և իսլամականացման գործոնը**

Ստեղծվելով 1991թ.ին, Ադրբեյջանի իսլամական կուսակցությունը բավականին կարծ ժամանակամիջոցում կարողացավ իր շարքերը համալրել մոտ 50 հազ. անդամներով: 1995թ.-ին, կազմակերպության առաջնորդ Ալիկրամ Ալիկը ձերբակալվեց, իսկ կուսակցությունը արտասահմանից ֆինանսական օժանդակություն ստանալու, ինչպես նաև հօգուտ իրանի իսլամական Յանրապետության լրտեսական գործունեություն ծավալելու մեղադրանքով՝ պարզապես չվերագրանցվեց: 1997թ. հունվարին, Ադրբեյջանի Միլլի Մեջլիսը, կրոնական ազատությունների մասին օրենքի բարեփոխված տարբերակը հաստատելիս, ամրագրեց, որ «օտարահպատակ և քաղաքացիությունից զուրկ ան-

<sup>1</sup> Այս հարցում ռուսական մամուլում հակասական իրապարակումներ եղան: Այսպես, «Արգումենտի ի ֆակտի» շաբաթաթերթն իր 2002թ. 44-րդ համարում գրեց ներկայացուցչության գրասենյակի փակման մասին, իսկ մեկ օր անց, համաձայն «Կոմերսանտ» թերթի, գրասենյակը շարունակում էր իր գործունեությունը Բաքվում. տե՛ս Կոմմերսանտ, Մ., 28. 10. 2002.

ձինք Աղրբեջանի Հանրապետության տարածքում կրոնական քարոզչություն վարելու իրավունք չունեն» [2]: Նախագահական իրամանագրով, Ալիկրամ Ալիկին ներում շնորհվեց, սակայն, որոշ ժամանակ անց, 2002թ. Նարդարանում բողոքի ակցիաներ կազմակերպելու մեղադրանքով, նա կրկին ձերբակալվեց:

Ինչպես ցույց տվեցին Բաքվից ոչ հեռու գտնվող Նարդարան ավանի դեպքերը, սոցիալական բնույթի պահանջներն Աղրբեջանում հաճախ բարձրացվում են իսլամիստական կարգախոսներով:

Նկատելի են նաև իսլամական սովորութային իրավունքի ինստիտուտների վերածննդին ուղղված առարկայական միտումներ, ինչպիսիք են, օրինակ, բազմակությունը և իսլամական օրենքով ժամանակավոր ամուսնության գործնականում կիրառումը: Այս հանգամանքը նաև բացատրվում է հատկապես շրջանների բնակչության սեռատարիքային կառուցվածքում տղամարդկանց թվաքանակի կտրուկ անկմանք, ինչը պայմանավորված է մի շարք գործոններով՝ արտագնա աշխատանք, զինվորական ծառայություն և այլն: Աղրբեջանի ներկայիս ժողովրդագրական իրավիճակին բնորոշ են գրեթե տղամարդագուրկ գյուղական բնակավայրերը, որտեղ եթե ոչ բացառապես, ապա գերազանցապես ապրում են կանայք, երեխաներ և ծերումնիներ:

Միաժամանակ, լարվածության միտում է նկատվում նաև բնակչության շիա և սուննի հատվածների միջև, որի վկայությունն են, մասնավորապես, 1999թ. Գյուղայում տեղի ունեցած բախումները [3]:

Աղրբեջանում ակտիվ գործունեություն են իրականացնում տարբեր երկրների կրոնական քարոզիչները: Իսլամական քարոզչության և բնակչության իսլամականացման համար պարարտ միջավայր են արտադրությունից գուրև և գործազուրկների հսկայական բանակ ունեցող շրջանները, ինչպես նաև փախստականների ճամբարները:

Բաքվի իշխանությունների կամայականությունների հանդեպ Արևմուտքի կողմից ցուցաբերվող հանդուրժողականությունը աղրբեջանական բնակչության մոտ արևմտյան ժողովրդավարական արժեքների նկատմամբ խորը հիասթափություն է առաջացնում: Նման իրավիճակում, երբ առկա է նախսկինում տիրապետող գաղափարախոսական ուղղության կատարյալ սնանկացումը և դրան հաջորդող քաղաքական ամբողջովին նոր դաշտի առաջացման հանգամանքը, որպես կանոն, ծևավորվում է նոր ընդդիմություն՝ հաճախ ձախերի, իսկ Աղրբեջանի պարագայում՝ նաև իսլամիստների շրջանում: Ընդ որում, բնավ չի կարելի բացառել մի այնպիսի պահի գոյությունը, երբ վերը նշված երկու գաղափարական ուղղությունների շահերը, թեկուզեն նույն հակաարևմտյան հողի վրա, կհամընկնեն: Նման հնարավոր զարգացումները, այն ել Աղրբեջանում դեռ չկայացած քաղաքական համակարգի պայ-

մանմերում, կարող են ձախերի համեմատությամբ ավելի հարձակվողական և արմատական տրամադրությունների տեր իսլամիստներին ապահովել թելադրողի դերակատարում, և այսօրինակ դաշինքում տիրապետող դիրքեր [4]: Գտնվելով իշխանության աչալուրջ վերահսկողության և ճնշման ներքո, չունենալով նաև ազդեցիկ առաջնորդ, իսլամական ուժերը, ի դեմս անընդհատ ավելացող մզկիթների (որոնց գծալի մասն, ի դեպ, կառուցվում է թուրքական մասնավոր ու պետական միջոցների հաշվին), այդուհանդերձ, տիրապետում են լայն զարգացած ենթակառույցի: Միայն թուրքական կողմի աջակցությամբ 1994-1997թթ. Բարքում և նրա շրջակայքում կառուցվել են տասնչորս մզկիթ և երկու մեղրեսե [5]: Մինչդեռ, նույնիսկ այս պարագայում, հանրահայտ «իրանական տարրերակը», որի հնարավոր կրկնությունն Աղրբեջանում ի սկզբանե երկյուղ էր պատճառում Արևմուտքին, քիչ հավանական է. աղրբեջանական հասարակությունն աշխարհիկ է, և իսլամական ինքնագիտակցությունը, հատկապես քաղաքային բնակչության շրջանում, թույլ է դրսևորված:

Իսլամական և ծայրահեղական գաղափարների սերման համար պարարտ հող են հանդիսանում փախստականների ճամբարները: Ըստ Աղրբեջանի Պետական վիճակագրական կոմիտեի տվյալների՝ Յայստանից և Ուզբեկստանից երկիր ներգաղթած փախստականների, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի հարակից շրջաններից տեղահանվածների ընդհանուր թիվը կազմում է 844 հազ. մարդ, ինչը հանրապետության բնակչության շուրջ 11%-ն է: ԱՍԿ-ի և Միզրացիայի միջազգային կազմակերպության տվյալներով՝ փախստականների ու ներքին տեղահանվածների ընդհանուր թիվը կազմում է 782 հազ. մարդ [6], [7]: Փախստականների դրությունն Աղրբեջանում շահարկման առարկա և միջազգային կազմակերպություններից լրացուցիչ օգնություն, տնտեսական այլևայլ եկամուտներ կորցելու միջոց է:

Դրությունը բարվոք չէ նաև մարդու իրավունքների և իիմնարար ազատությունների ապահովման ոլորտում, ինչի պատճառով պաշտոնական Բաքում լուրջ նախազգուշացումներ է ստանում միջազգային տարբեր ատյանների, մասնավորապես Եվրոպական խորհրդարանական վեհաժողովի կողմից:

Այդուհանդերձ, Արևմուտքը Աղրբեջանում մարդու իրավունքների ու ազատությունների խախտման և ընտրակեղծիքների հանդեպ չափից ավելի հանդուրժողականություն է դրսևորում: Սա պայմանավորված է, առաջին հերթին, նավթի գործոնով: Որքան հարուստ են նավթի պաշարներ տվյալ երկրում, այնքան Արևմուտքն ավելի հանդուրժողական է զանազան կամայականությունների ու խախտումների նկատմամբ՝ եթե տվյալ երկրի վարչակարգը հավատարիմ է Արեւմուտքին: Մրանով

է պայմանավորված նաև այն փաստը, որ անգամ ադրբեջանական իշխանությունների կողմից թույլատրվող և ժողովրդավարության սկզբունքներին անհարիր քայլերի ու մարդու իրավունքների համատարած ուժնահարման աղաղակող պայմաններում, Բաքվին հաջողվում է խուսափել միջազգային մեկուսացումից: Արևոտքի դժգոհությանը պաշտոնական Բաքուն պատասխանում է նորանոր նավթային գործարքներով ու Եվրոպատլանտյան ինտեգրմանն ուղղված պաշտոնական հայտարարություններով [8]:

Ըստ 1999թ. մարդահամարի՝ Ադրբեջանի բնակչությունը կազմում է 8 մլն. մարդ. ցուցանիշ, որն, ինչ խոսք, պետք է ընդունել մեծ վերապահությամբ: Իրականում, տարբեր հաշվարկների համադրումով կարելի է եզրահանգել, որ Ադրբեջանում ներկայիս բնակչում է մոտ 4 մլն. մարդ: Միայն ՈՂ-ում ադրբեջանական ազգության ներկայացուցիչները շուրջ 2,5-3 մլն. են: Նրանց ճնշող մեծամասնությունը աշխատավոր միգրանտներ են, որոնց 80%-ը երիտասարդ և աշխատունակ տղանարդիկ են [9], [10]:

Ռուսաստանից զատ, ադրբեջանցիների հոծ զանգվածներ են արտագաղթել նաև Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ ու Եվրոպա: Հատկանշական է, որ միջազգային կոնվենցիաների պաշտպանության տակ հայտնվելու նպատակով, ադրբեջանցի միգրանտները առանձին դեպքերում գրանցվում են որպես «հրեա» կամ «հայ» փախստականներ, ու իբրև այդպիսիք, հաստատվում Եվրոպական երկրներում [11, ս. 104]:

Երկրի զարգացման և տնտեսական կյանքի վրա պակաս բացասար չի անդրադառնում ներքին միգրացիան: Միլիոնների հասնող գործազուրկների վիրթսարի բանակի գոյության պայմաններում, շրջանների բնակչության զգալի մասը, աշխատանք գտնելու հույսով, հաստատվում է Բաքվում և նրա շրջակայքում, ինչը հանգեցնում է մայրաքաղաքի և ողջ Ապշերոնի բնակչության թվի շեշտակի աճին: Բնակչության միայն 19%-ն ապրում է շրջաններում [11, ս. 99]:

Համաձայն պաշտոնական տվյալների՝ Երկրի բնակչության 50%-ը գտնվում է աղքատության սահմանից ներքև: Ընդդիմության աղբյուրները, այսօրինակ վիճակագրության նախին խոսելիս, բերում են 80%-ի ցուցանիշը [12]: ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (UNDP) տվյալներն ավելի մոտ են ընդդիմության հաշվարկներին և վկայում են, որ Ադրբեջանի բնակչության 80%-ը գտնվում է աղքատության մեջ, իսկ Երկիրն, այս առումով, նախկին ԽՍՀՄ հանրապետություններից «զիջում է» միայն Վրաստանին ու Մոլդովային [13, ս. 128]:

Սոցիալական պայմանների վատթարացման պատճառով, ներկայիս

Աղրբեջանում դպրոցահասակ երեխաների 60%-ը միջնակարգ ուսումնական հաստատություն չի հաճախում [14]: Նման իրավիճակը հղի է ներքաղաքական դրությունը վտանգող անկայուն զարգացումներով:

### **3. Ներքաղաքական զարգացումներ**

Հետխորհրդային ներքաղաքական զարգացումների կտրվածքում՝ Աղրբեջանն առանձնանում է իր անկայունությամբ, հեղաշրջումների ու հեղաշրջման փորձերի առատությամբ: Իրադրության կայունացման որոշակի միտումներ ի հայտ եկան սուկ Յեյլար Ալիևի իշխանության վերադառնալուց, այդ իշխանության ամրապնդումից ու պետական ապարատի կազմակերպումից հետո: Ըստ այդմ, Յ. Ալիևի կառավարումը ընդունված է բաժանել երեք փուլերի: Առաջին փուլում՝ 1993-1995թթ. ձեռնարկվեցին կոնկրետ միջոցառումներ պետականության ամրապնդման, բանակաշինության, երկրի հնարավոր մասնատումը կասեցնելու և դարաբառյան պատերազմում իրադադար հաստատելու ուղղությամբ: Երկրորդ փուլում՝ 1995-1998թթ. անցկացվեցին խորհրդարանական ընտրություններ, ընդունվեց Սահմանադրությունը, և իշխանության լծակների հետագա ամրապնդման ուղղությամբ որակապես նոր քայլեր մշակվեցին ու իրագործվեցին [15, ս. 119-120]:

1998թ. հոկտեմբերին կայացած նախագահական ընտրությունների արդյունքում անցունը երկրորդ նախագահական շրջանին՝ ընդունված է համարել Յեյլար Ալիևի միահեծան իշխանության վերջնական ամրապնդման շրջանը: Այս փուլն իր մեջ ներառնում է նաև 2003թ. նախագահական ընտրությունների արդյունքում հլիամ Ալիևի իշխանության գալը: Նշենք նաև, որ, իրենց հերթին, ամրապնդվում են նաև ընդդիմության դիրքերը, ինչը պայմանավորված է աղրբեջանական վարչակարգի անկարողությամբ լուծելու այնպիսի հրատապ խնդիրներ, ինչպիսիք են դարաբառյան հականարտության կարգավորումը և սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավումը: Մյուս կարևոր հանգանաքը ահազնացող չափերի հասնող կաշառակերությունն է, որի ծավալներով, Աղրբեջանը, հետխորհրդային հանրապետությունների շարքում առաջին տեղն է գրավում:

Չնայած ընդդիմության դիրքերի որոշ ամրապնդմանը, այդուհանդերձ, ներկայիս Աղրբեջանում նախագահական իշխանությունը համարյա թե բացարձակ է, քանզի ակնբախ է, որ կարևոր պետական որոշումներ կայացնողը եղել և մնում է ալիևյան կլանը:

Երկրի հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական ոլորտներում շարունակում է մեծ դեր խաղալ կլանային համակարգը, որը խորհրդային Միության փլուզումից հետո նոր որակներ ու ձևափոխում-

ներ է ստացել: Աղրբեջանում տարածքային կլանների ձևավորումն ուղղակիորեն պայմանավորված է այս կամ այն քաղաքական գործչի որևէ երկրամասից սերվելու հանգամանքով: Առավել ազդեցիկ են Նախիջևանի, նախկին հայաստանաբնակ աղրբեջանցիների (այսպես կոչված ԵրԱԶ-ների,- Հ. Դ.), Բաքվի, Գյանջայի և Ղարաբաղի կլանները: Այս հինգ հիմնական կլանների կողքին, գոյություն ունեն այլ կլաններ ևս, ինչպես օրինակ՝ լենքորանցիների, շամախեցիների ևն., որոնք, սակայն, նվազ կերպով են ներազդում երկրի հասարակական ու տնտեսական կյանքի վրա: Այսօր նույնպես, առավել ազդեցիկ կլան է մնում նախիջևանյանը, որի քաղաքական հենքը ալիևյան «Ենի Ազերբայջան» կուսակցությունն է: Բացի Ալիևներից, նախիջևանյան կլանի ներկայացուցիչներ են աղրբեջանական քաղաքական վերնախավի այնպիսի դեմքեր, ինչպիսիք են Աղրբեջանի «Ազգային անկախություն» կուսակցության նախագահ Էթիբար Մամեդովը, «Ազգային ճակատ» կուսակցության ղեկավար Ալի Քերիմլին և Ղեմոկրատական կուսակցության առաջնորդ Ռասուլ Գուլիևը:

Ինչպես և սպասվում էր, 2003թ. նախագահական ընտրությունների նախաշեմին, ներքաղաքական կյանքն Աղրբեջանում աչքի ընկավ աճող լարվածությամբ: Իշխանությունները հետամուտ էին կասեցնելու ամեն քիչ թե շատ ազդեցիկ ու գործուն ընդդիմադիր բլոկի ձևավորումը: Մյուս կողմից, աղրբեջանական ընդդիմությունը տարբեր գաղափարական և արտաքին գործոնների հետո մի խճանկար էր: Ընդդիմության առաջնորդներին պայմանականորեն կարելի էր բաժանել երկու խմբի՝ վտարանդի և հայրենաբնակ: Առաջին խմբի առավել կարկառուն ներկայացուցիչներն էին նախկին նախագահ Այազ Մութալիբովը և խորհրդարանի նախկին նախագահ Ռասուլ Գուլիևը: Այս Մութալիբովը 1992թ. կրկնակի իշխանազրկումից հետո<sup>2</sup> հաստատվել է Մոսկվայում վայելելով ռուսական կողմի հովանավորությունը: Չնայած պաշտոնական Բաքվի քաղմարիկ դիմումներին, Մոսկվան, այնուամենայնիվ, հրաժարվում է Աղրբեջանում քրեական պատասխանատվության ենթակա Մութալիբովին հանձնել աղրբեջանական կողմին, իսկ Մութալիբովն, իր հերթին, ձգտում է ներկայանալ որպես քաղաքական վտարանդի: Նշենք միայն, որ նույն Մոսկվան, փաստորեն առանց որևէ լուրջ երկնտության, Ռահիմ Ղազիկին և Սուլեյ Ջուլեյնովին հանձնեց աղրբեջանական համապատասխան մարմիններին:

<sup>2</sup> 1992թ. մարտի 6-ին, Աղրբեջանի Միլլի Մեջլիսի նիստում, Ա. Մութալիբովը հրաժարական տվեց, սակայն, մայիսի 14-ին, այս անգամ ընդամենը մեկ օրով, նորից ընտրվեց Աղրբեջանի նախագահ: Հաջողոր օրը նա ստիպված էր հեռանալ Բաքվից՝ նախագահական պալատի բոնագավթնան պատճառով:

Ինչպես և սպասվում էր, Աղոբեջանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովը մերժեց գրանցել Այազ Մութալիբովի թեկնածությունը նախագահական ընտրություններին մասնակցելու համար: Այս փաստը ամենին էլ պետք չէ գնահատել սոսկ որպես Մութալիբովի քաղաքական ծանրակշիռ կապիտալին հակազդելու միակ միջոց: Անենայն հավանականությամբ, պաշտոնական Բաքուն չէր ցանկանում «ռուսական հավանական դրածոյի» հարցում ավելորդ ռիսկի դիմել՝ իշխանակոխությունը խաղաղ կերպով իրականացնելու ժամանակ:

Ռասուլ Գուլիկի պարագայում նույնպես առկա է քրեական հետապնդան պահը, սակայն այս անգամ՝ պետական միջոցների խոշոր չափի հափշտակման մեղադրանքով: Համաձայն տարածված տեսակետի՝ Յեյդար Ալիկի կողմից «նախիջևանցի» Գուլիկի նկատմամբ հալածանքները պայմանավորված էին վերջինիս հենց ծագմամբ, քանզի կար իրական վտանգ, որ ապագայում նա կլանի առաջնորդ ու հնարավոր իշխանահաջորդ դառնալու հավակնություններ կդրսնորի: Պաշտոնանկ լինելուց հետո Գուլիկը արտասահմանում է: Նա հեռացված է «Ենի Ազերբայջան» կուսակցության շարքերից, ինչպես նաև՝ զրկված պատգամավորական անձեռնմխելիությունից [16, ս. 44-45]: Ռասուլ Գուլիկի հեռացունով, Սիլի Սեջլիսը, փաստորեն, վերածվեց «նախագահական նախաձեռնություններին հավանություն տվող մեքենայի» [15, ս. 182]:

Ընդդիմության համակարգող կենտրոնը, որն ստեղծվեց մի քանի տարի առաջ, դրական երևույթ կարելի էր համարել ընդդիմության քիչ թե շատ միասնական դիրքորոշում ծևավորելու առումով: Սակայն, նա աչքի է ընկնում նաև մի քանի ակնհայտ թերություններով, որոնցից կարելի է նշել, նախ և առաջ, քաղաքական և գաղափարախոսական հատվածայնությունը, քաղաքական շահերի հստակեցնան և դրանց հետամուտը լինելու անկարողությունը, ինչպես նաև ներքին պառակտվածությունն ու անհանդուրժողականությունը: Ընդդիմության շրջանում սուրբ Են դրսերված նաև Վրեժիսնդրական (ռևանշիստական) և ծայրահեղական տրամադրությունները [17]:

Մինչ ընդդիմության շրջանում կրթեր էին բորբոքվում նախագահական ընտրություններին միասնական թեկնածու առաջադրելու հարցի շուրջ, 2003թ. օգոստոսի սկզբներին հրապարակվեց նախագահ Ալիկի կողմից ստորագրված հրամանագիրը՝ Իլհամ Ալիկին վարչապետի պաշտոնում նշանակելու նասին: Այս քայլը ողքան կանխատեսելի, նույնքան և «սառը ցնցուղ» էր ընդդիմության համար, հատկապես Արևմուտքի աջակցությանն արժանանալուց հետո: Մրանով, ըստ Էռթյան, ոյուրացվեց իշխանությունը Յեյդար Ալիկից որդուն՝ Իլհամ Ալիկին փոխանցելու կոմբինացիան:

Ընդհանրապես, Աղրբեջանի իշխանական վերնախավը, տիրապետելով Երկրի ներսում գոյություն ունեցող տեղեկատվական, վարչական, ուժային և ֆինանսական ռեսուլտներին, բավական հեշտ է կարողանում ապահովել իշխանության հետագա տիրապետումը:

Տաղիկական սցենարի հավանականությունն Աղրբեջանի պարագայում փոքր է. ռազմական բախման և քաղաքացիական պատերազմի վտանգը կարող է իրական դառնալ, եթե տարբեր կլանների և տեղական խմբավորումների ու իշխանությունների միջև անզիջում պայքար սկսվի:

Աղրբեջանական ընդդիմության կարծիքով՝ արևմտյան նավթային ընկերությունները, տարբեր գործարքների մեջ մտնելով ալիքան վարչակարգի հետ և ֆինանսապես սատարելով Վերջինիս, բացասական ազդեցություն են թողնում Աղրբեջանում ժողովրդավարական և քաղաքացիական հասարակություն կազմակերպելու գործընթացի վրա: Արևմտյան նավթային բիզնեսը դիտվում է որպես կաշառակեր համակարգին սատարող կառույց [18]: Կաշառակերության մակարդակով՝ Աղրբեջանը առաջատար դիրքեր է գրավում ոչ միայն ԱՊՀ Երկրների շարքում: Դամաձայն «Տրանսպերենսի ինտերնեշնլ» (*Transparency International*) միջազգային կազմակերպության տվյալների՝ 99 Երկրների ցուցակում, Աղրբեջանը, կաշառակերության մակարդակով երրորդ տեղն է գրավում [19, c. 371]:

2003 թ. նախագահական ընտրությունների նախօրյակին ալիքան խմբավորմանը Վաշինգտոնի սատար լինելու հանգամանքը արևմտյան որոշ ազդեցիկ թերթեր ենթարկեցին սուր քննադատության՝ դա համարելով խաթարիչ Աղրբեջանում քաղաքացիական հասարակության և ժողովրդավարության հաստատման երկարատև շահերի տեսանկյունից [20], [21]:

#### **4. Նոր գաղափարախոսության փնտրութում**

Որպես նորանկախ պետականություն, Աղրբեջանը, հետխորհրդային մյուս հանրապետությունների նման, գտնվում է ազգային և պետական նոր գաղափարախոսությունների մշակման ու դրանց գործնական կիրառման գործընթացում: Դա դրսևորվում է նաև պատմական անցյալի վերաբերավորմամբ, պատմական հիշողության քաղաքականացմամբ և առասպելականացմամբ: Աղրբեջանի, ինչպես նաև կենտրոնասիական որոշ հանրապետությունների պարագայում, ազգային և պետական գաղափարախոսության մշակման ընթացքն աչքի է ընկնում առաջնորդների կողմից տվյալ ոլորտ ներմուծվող առարկայական նախաձեռնությունների կիրառմամբ և ներազդեցությամբ:

Մասնավորաբար, Ադրբեջանի դեպքում կարելի է առանձնացնել և վերլուծել երկու միանգամայն նոր միտում՝ «սեփական ցեղասպանության» և «սեփական սփյուռքի»:

1998թ. մարտի 31-ին, Յեյդար Ալիևի կողմից ստորագրված «Ադրբեջանցիների ցեղասպանության մասին» հրամանագիրը անհախաղեալ է հանաշխարհային պատմության մեջ [22]: Սա, ըստ էության, որևէ երկրի դեկավարի կողմից սեփական ժողովրդին ցեղասպանական հոգեբանություն պարտադրելու թերևս առաջին փորձն է, որն, անշուշտ, ծանր բեր է դառնալու ադրբեջանցիների հետագա սերունդների համար: Այս հրամանագրով, պաշտոնական Բարուն, փաստորեն, հայերին մեղադրում է ադրբեջանցիների նկատմամբ վերջին երկու հարյուր տարիների ընթացքում պարբերաբար իրականացրած ցեղասպանության մեջ: Առավել շեշտվում է, այսպես կոչված, «Խոջալուի ցեղասպանության» թեզը: Սա, անկասկած, Թուրքիայի անմիջական հովանավորությամբ և աջակցությամբ տարվող քաղաքական գիծ է, և գլխավորապես նպատակադրված է չեզոքացնելու կամ առնվազն հակազդելու Մեծ Եղեռնի միջազգային ճանաչմանն ուղղված ջանքերին: Ադրբեջանի նորագույն պատմության այս էջի վերաբերյալ եղած բազմաթիվ անվիճելի սկզբնադրյուրների համադրումը բերում է այն եզրակացության, որ Խոջալուի բնակչների «զանգվածային ոչնչացումը» մաս է կազմել երկրի ներսում իշխանափոխության շուրջ ծավալված պայքարին [23]:

Այս փաստն ակամայից հիշեցնում է դեռ 20-րդ դարի սկզբներին ադրբեջանական ազգային էթնո-մշակութային ինքնության մոդելի ծևավորման գործընթացը, երբ ադրբեջանական մտավորական վերնախավը որպես արդիականության և գերազանցության մոդել ընդօրինակում, պատճենում էր հայկական էթնո-մշակութային ինքնության առանձին տարրեր:

Մյուս նկատելի նախաձեռնություններից է արտասահմանյան երկրներում բնակվող ադրբեջանցիների կազմակերպությունների ստեղծման և նրանց համախմբման ուղղությամբ տարվող աշխատանքը: Դատելով ադրբեջանական մամուլի հրապարակումներից, կարելի է արձանագրել, որ «ադրբեջանական սփյուռքի» կազմակերպման և «սփյուռք-հայրենիք» փոխկապված համակարգի ստեղծման հիմնախնդիրը ադրբեջանական պետական շինարարության ներկայիս փուլի կարևոր բաղադրիչներից է: Այս գործում չափազանց աշխույժ է Արտասահմանում բնակվող ադրբեջանցիների հետ աշխատանքի պետական կոմիտեն: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում իրանի հյուսիսարևմուտքում (այսպես կոչված «Հարավային Ադրբեջան»), Վրաստանի հարավ-արևելյան հատվածում, ինչպես նաև Ղաղստանի հարավում

բնակչության հոծ զանգված կազմող աղրբեջանցիներին [24]: Իհարկե, առաջին հերթին, ուշադրության կենտրոնում իրանի աղրբեջանցիներն են: Վերջին տարիների ընթացքում «Երկու Աղրբեջանների վերամիավորման» հարցը նոր թափ է ստացել, շատ դեպքերում գերազանցելով անգամ նախկին նախագահ Էլշիբեյի կառավարման օրոք առկա հակա-իրանյան տրամադրությունները: «Հարավային Աղրբեջանի հարցը» աղրբեջանական հասարակական-քաղաքական շրջաններում առավել հաճախ քննարկվող հիմնախնդիրներից է: 2002թ. սեպտեմբերին, Աղր-բեջանցիների համաշխարհային կոնֆրենսը դիմեց ՍԱԿ-ի գլխավոր քարտուղար Քոֆի Անանին՝ հորդորելով «Վերջ դնել աղրբեջանցիների նկատմամբ վարչող խտրական քաղաքականությանը» և «բանաձև ըն-դունել այս խնդրի շուրջ» [25]: Ներկայումս Աղրբեջանում գործում են «Հարավային Աղրբեջանի ազգային շարժում», «Հարավային Աղրբեջա-նի ազգային վերածննդի շարժում», «Միացյալ Աղրբեջան» կազմակեր-պությունները և «Հարավային Աղրբեջանի խորհրդարանի նախաձեռ-նող խումբը»: Սրանք հակաիրանյան նախաձեռնություններից զատ, հանդես են գալիս նաև թյուրքական համերաշխության դիրքերից, մաս-նավորապես իրենց աջակցությունը հայտնելով Իրաքի թուրքմենների իրավունքների ճանաչման և նրանց նյութական աջակցություն ցուցա-բերելու հարցում [26], [27]: Հարավային Աղրբեջանի պատմության դա-սավանդումը պաշտոնական Բաքվի կրթական քաղաքականության անբաժանելի մասն է [28]:

Անժխտելի է, որ ժամանակակից աղրբեջանական պետական և ազ-գային գաղափարախոսության ծևավորմանն ուղղված վերը նշված եր-կու տարրերը աղերսվում են հայկական իրականության հետ, որն ընդօ-րինակվել է և դարձել ազգային գաղափարախոսության հիմնական մո-դել: Ընդ որում, եթե «աղրբեջանցիների ցեղասպանության» թեզը հան-դես է գալիս որպես հակակշիռ Մեծ Եղեռնին և վայելում է Անկարայի աներկրա աջակցությունը, ապա «աղրբեջանական սփյուռքի» հիմնա-կան դերակատարությունը դիտվում է ազգային համախմբնան և արդ-յունավետ քարոզության տեսանկյուններից:

Այսպիսով, ներկայումս իրականացվում է նպատակային քաղաքա-կանություն՝ ի նպաստ աղրբեջանական և թուրքական սփյուռքի տար-բեր կառույցների ինտեգրման և համագործակցության: Մասնավորա-պես, 2003թ. հունիսի 1-ին, թուրքական Չեշմե քաղաքում կայացած աղրբեջանական ու թուրքական սփյուռքի կազմակերպությունների դե-կավարների համաժողովն արձանագրեց, որ կարևոր նպատակներից է աղրբեջանական լորբի դերի ուժեղացումը միջազգային կազմակեր-պություններում ու արտերկրում [27]:

## 5. Արտաքին քաղաքականություն

Անկախությունից ի վեր՝ Ադրբեջանի արտաքին քաղաքական կուրսի ծևավորումը հիմնականում ընթանում է դարաբաղյան գործոնի ազդեցության ներքո:

### 5.1. Ռուսաստան

2001թ. հունվարին ՌԴ նորընտիր նախագահ Վլադիմիր Պուտինի Բաքու կատարած այցը շրջադարձային էր ռուս-ադրբեջանական հարաբերություններում: Իհարկե, մի շարք երկկողմ համաձայնագրերի ստորագրման սույն փաստը, նաև չերմ ընդունելությունն ու հյուրընկալ մթնոլորտը բավական չեն Ադրբեջանի՝ դեպի Ռուսաստան վերակողմնորոշվածության մասին թեզը հաստատելու համար: Այդուհանդերձ, ռուս-ադրբեջանական մերձեցման մեկնարկային միտումները բացասական ազդակներ ուղարկեցին Արևմուտքին: 2002թ. ի հայտ եկան հետագա մերձեցման նոր միտումներ, որոնք իրենց դրսևորումները գտան երկու երկների նախագահների միջև կայացած նորանոր հանդիպումների և միջպետական համաձայնագրերի կնքման մեջ: Նույն թվականին ստորագրվեց ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող Գաբալիի ռադիոլոկացիոն կայանը 10 տարիով ռուսական կողմին վարձակալմամբ հանձնելու վերաբերյալ պայմանագիրը: Այս փաստաթուղթը, ըստ Էռիքյան, օրինականացրեց ՌԴ-ի ուղղակի ռազմական ներկայությունն Ադրբեջանի տարածքում: Մեկ այլ կարևոր հարցի շուրջ ևս կայացավ կողմերի երկար սպասված համաձայնությունը: Խոսքը Կասպից ծովի ավագանի հատակի սահմանագծնան վերաբերյալ 2002թ. սեպտեմբերի 23-ին ստորագրված համաձայնագրի մասին է:

Ի թիվս երկկողմ հարաբերությունների ասպարեզում ստորագրված այլ փաստաթղթերի, հիշատակնան է արժանի նաև մեկը, որն ապագայում կարող է զգալիորեն ներազդել ռուս-ադրբեջանական ռազմական համագործակցության վրա: Համաձայն այդ պայմանագրի՝ կողմերը պարտավորվում են չփոխել նախկինում ռազմական արտադրանք թողարկած ձեռնարկությունների պրոֆիլը [29], [30]:

Մերձեցումը Ռուսաստանի հետ, ինչպես նաև ադրբեջանա-իրանական հարաբերություններում լարվածության որոշակի լիցքաբափումը հանգեցրեցին Արևմուտքի հետ հարաբերություններում սառը երանգների առաջացմանը:

Ադրբեջանի կողմնորոշումը դեպի ՆԱՏՕ բացահայտ է: Սակայն, միջազգային այս կառույցը, լինելով տարրեր շահեր հետապնդող պետությունների համակցություն, միասնական դիրքորոշում դժվար թե

հանդես բերի տարածաշրջանի նկատմամբ: Ներկա փուլում ՆԱՏՕ-Ադրբեյջան համագործակցության իրական մակարդակը չի կարելի բարձր համարել, իսկ գոյություն ունեցող խնդիրներն ու դժվարությունները անիրական են դարձնում ՆԱՏՕ-ին շուտափույթ կերպով անդամակցելու Բաքվի հույսերը:

## 5.2. Թուրքիա

Սուլեյման Ղեմիրելի նախագահության ավարտն ու Ահմեդ Նեջետ Սեզերի Թուրքիայի ղեկավար դառնալու հանգամանքը նոր մոտեցումներով անդրադարձան թուրք-ադրբեյջանական հարաբերությունների վրա: Առաջին հերթին նկատելի նահանջ ապրեց Հեյդար Ալիևի գծին անվերապահ սատարման Անկարայի քաղաքականությունը: Թյուրքական եղբայրության մասին նախկին կոչերն այժմ տեղի են տվել քաղաքական ու տնտեսական սրափ հաշվարկներին:

Այդուհանդերձ, Թուրքիան շարունակում է տարածաշրջանում Ադրբեյջանի հիմնական ռազմավարական գործընկերը մնալ: Չնայած գոյություն ունեցող որոշ տարածայնություններին, ադրբեյջանա-թուրքական սերտ համագործակցությունը ռազմական և քաղաքական ոլորտներում՝ երկու երկրների համար էլ շարունակում է գերակայող մնալ:

2003թ. մարտին Թուրքիայի նախագահ Սեզերի կողմից ՀՀ վերընտիր նախագահ Ռոբերտ Քոչարյանին շնորհավորական ուղերձ հղելու փաստը լուրջ դժգոհությունների տեղիք տվեց Բաքվի պաշտոնական շրջանակներում և որակվեց որպես հայ-թուրքական հարաբերությունների բարելավմանն ու երկկողմ դիվանագիտական հարաբերությունների հաստատմանը միտված քայլ: Անկարան իր ուղերձը գնահատելով որպես սուսկ արձանագրային սովորական գործողություն՝ Բաքվին վստահեցրեց դարաբաղյան հարցում Ադրբեյջանին աներկրա աջակցություն ցուցաբերելու և իր սկզբնական դիրքորոշումից չհեռանալու պատրաստակամության մեջ [31], [32]: Ակնհայտ է, որ հայ-թուրքական հարաբերությունների հնարավոր լիցքաբահումը թուրքական կողմի համար ընթանալու է Բաքվի դիրքորոշման հետ անընդհատ հաշվի նստելու պայմաններում, այլապես անխուսափելի կլինեն երկու երկրների միջև լուրջ տարածայնությունները:

Այլ իրավիճակ է ստեղծվել երկկողմ տնտեսական համագործակցության ոլորտում: Ադրբեյջանում նկատվում է թուրքական տնտեսական ներկայության անկում, ինչը մեծապես պայմանավորված է հենց Թուրքիայում առկա տնտեսական խորը ճգնաժամով: 1992թ.-ից սկսած, թուրքական ներդրումների ընդհանուր ծավալն Ադրբեյջանում 2001թ. դրությամբ կազմել է \$1,4 մլրդ.: Սակայն, եթե մինչև 1998թ. յուրաքանչ-

յուր տարի ներդրվում էր \$150-200 մլն., ապա 1998-2000թթ. ընթացքում թուրքական ներդրումների միջին տարեկան ծավալը կրճատվել է \$35 մլն.-ով [33]:

Այլ կարգի հարաբերություններ են ստեղծվել Նախիջևանի շրջանի հետ: Նախիջևանի բնակչության մեծ մասն իր ապրուստը հայթայթում է Թուրքիայում: Մյուս կողմից, թուրքական բանակայիններն աշխույժ համագործակցում են տեղի գինվորականության հետ, այդ թվում նաև՝ սահմանների պաշտպանության գործում:

ՆԱՏՕ-ի «Համագործակցություն իանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում, թուրքական կողմի անմիջական աջակցությամբ, աղբեջանական ռազմական ուժերը ներկայումս բերվում են Յուրսիստլանտյան դաշինքի ստանդարտների, իհարկե որպես նախօրինակ ունենալով թուրքական բանակային համակարգը: Աղբեջանը կանոնավոր կերպով մասնակցում է ՆԱՏՕ-ի համատեղ զորավարժություններին: Սակայն, 2003թ. Յայաստանում անցկացված «Համագործակցության լավագույն ջանք - 2003» զորավարժություններին Աղբեջանը հրաժարվեց մասնակցել, չնայած որ ներկա էին ռազմական տեսուչներ Թուրքիայից:

Թուրքիան մեծ ուշադրությամբ էր հետևում 2003թ. Աղբեջանի նախագահական ընտրություններին: Պաշտոնական Անկարան հակված էր կարծելու նույնիսկ, որ այդ ընտրությունները Թուրքիայի ներքին խնդիրն են, քանզի «յուրաքանչյուր թեկնածու սերտորեն կապված է թուրքական պետության տարբեր խավերի հետ»: Թուրքիան մի կողմից հակված էր պաշտպանել Իլհամ Ալիևի թեկնածությունը որպես յուրահատուկ մի երաշխիք՝ Աղբեջանի և Թուրքիայի միջև դաշնակցային սերտ հարաբերությունների հետագա անրապնդման, ինչպես նաև՝ Բաքու-Ջեյհան նավատարի պարտադիր շահագործման համատեքստում: Մյուս կողմից, թուրքական ազդեցիկ գինվորական և քաղաքական շատ շիշանակներ հանդես էին գալիս ի պաշտպանություն իսա Ղամբարի թեկնածության:

Այսպես թե այնպես, անցած նախագահական ընտրությունները նոր էջ են բացում երկկողմ հարաբերություններում:

### 5.3. Իրան

Իրանի պարագայուն նոր զարգացումներ են նկատվում երկու երկրների հարաբերություններում, որոնք վերջին տասը տարիների ընթացքում համարյա թե միշտ լարված են եղել: Որոշակի աշխուժացում է նկատվում տնտեսական և քաղաքական շփումների առումով: Բանակցություններ են վարվում աղբեջանական և իրանական Աստարա քա-

դաքների միջև երկարուղային հաղորդակցության ապահովման նախագծի շուրջ, որն իրականացվելու է միջազգային «Հյուսիս-Հարավ» տրանսպորտային միջանցքի շրջանակներում:

Եներգետիկ համագործակցության ոլորտում նախատեսվում են փոխադարձ էներգամատակարարման ցանցի ստեղծման և էներգակիրճների նատակարարման նախագծեր [4]: 2002թ., երկարատև ծգձգումներից հետո, վերջապես կայացավ Հեյդար Ալիևի պաշտոնական այցը Թեհրան: Այն փոքր-ինչ լիցքաբափեց երկու երկրների միջև նախորդ տարիների ընթացքում կուտակված լարվածությունը, որը պայմանավորված էր Կասպից ծովի ավազանի բաժանման, ինչպես նաև որոշ նավթային հանքավայրերի պատկանելության հարցերի շուրջ ծագած տարածայնություններով, Ապշերոնում ՆԱՏՕ-ական ռազմաօդային ուժեր տեղաբաշխելու Բաքվի մտադրությամբ և այլն:

Հաշվի առնելով իրանական հետախուզության կողմից Ադրբեյջանի դեմ վարվող քայլայիշ գործունեության վերաբերյալ ադրբեյջանական կողմի բազմաթիվ մեղադրանքները՝ աննախադեպ կարելի է համարել Ադրբեյջանի ազգային անվտանգության նախարարության և Եթևարի (իրանական հետախուզություն) միջև ստորագրված համաձայնագիրը, որով այս երկու կառույցները պայմանավորվեցին գործունեություն չծավալել միմյանց դեմ [34]:

Միեւնույն ժամանակ, Իլիամ Ալիևի իշխանության գալուց հետո Բաքվին դժվար կլինի դիմակայել Վաշինգտոնի ճնշումներին՝ իրանի դեմ հնարավոր պատերազմի դեպքում ԱՄՆ-ին լիարժեք աջակցություն ցույց տալու նպատակով:

Նկատենք նաև, որ ադրբեյջանական կողմը խորացնում է իր ռազմական համագործակցությունը Պակիստանի և Վրաստանի հետ: Վերջինիս հետ համաձայնություն է ձեռք բերվել չանդամակցել ԱՊՀ հակառային պաշտպանության համակարգին (ՀՕՊՀ), այլ՝ ստեղծել միասնական ռազմաօդային ուժեր և ՀՕՊՀ [35], [36]:

#### **5.4. Թուրքմենստան**

Լարվածությունը չի թուլանում ադրբեյջանա-թուրքմենական հարաբերություններուն, ինչը պայմանավորված է Կասպից ծովի ավազանի նավթային պաշտկաների պատկանելության և դրանց հետագա շահագործման խնդրով: Երկկողմ անբարյացակամ մթնոլորտը ձևավորվեց 2000թ.-ին, երբ Թուրքմենստանը մի քանի երկրների, այդ թվում նաև Ադրբեյջանի հանդեպ մտցրեց վիզային ռեժիմ և Բաքվում փակեց թուրքմենական դեսպանատունը [37]: Մինչ այդ Թուրքմենբաշին հայտարարել էր, որ թուրքմենական գազը Ադրբեյջանի տարածքով կարտահանվի

Թուրքիա ու Եվրոպա: Սակայն, այդ մասին համաձայնագիր կնքելուց ընդամենը երկու ամիս անց, նա հրաժարվեց ծրագրից, ինչով և աննախադեպ լարվածություն հաղորդեց երկու երկրների միջև առկա փոխհարաբերություններին [38]: Մասնավորապես, կասպյան «Քյափազ» հանքավայրի պատկանելության հարցի շուրջ ծագած լարվածությունը հանգեցրեց նրան, որ թուրքմենական ինքնաթիռները մարտական թռչքներ սկսեցին իրականացնել այդ գոտում, իսկ Թուրքմենստանի պաշտպանության նախարարությունը հայտարարեց. «Արդյո՞ք Ադրբեյջանին պետք է մեկ այլ Պարաբաղ Կասպից ծովում» [39, ս. 406]: Ադրբեյջանա-թուրքմենական հարաբերություններում լարվածության մեկ այլ ապացույց էր Բաքվում անցկացված թյուրքալեզու երկրների՝ թվով վեցերորդ գագաթաժողովին Թուրքմենբաշու բացակայությունը [40], [41]:

Ներկայումս թյուրքական աշխարհում տեղի է ունենում առաջնահերթությունների վերաբերություն: Ըստ այդմ, տնտեսական ծրագրերի եկամտաբերությունը և ազգային շահերին համապատասխանեցումը բոլորովին էլ չեն ագուցվում ընդհանուր թյուրքական շահերին:

## **6. Իրաքյան պատերազմը և Ադրբեյջանը**

Իրաքյան պատերազմի հենց սկզբից, պաշտոնական Բաքուն իր աներկրա աջակցությունը հայտնեց ԱՄՆ-ի ռազմական նախաձեռնություններին՝ միաժամանակ առաջարկելով իր օդային տարածքը ամերիկյան ռազմաօդային ուժերի համար: Ադրբեյջանի քաղաքական գործիչների մեջ մասը, հակառակ երկրի հասարակական կարծիքին, սատարեց Իրաքի դեմ ԱՄՆ և Մեծ Բրիտանիայի ռազմական գործողություններին, դրանում տեսնելով Սահիտակ տան ցանկությունը՝ նավթով հարուստ տարածաշրջանների նկատմամբ ամերիկյան վերահսկողության հաստատման ուղղությամբ տարվող մշակված քաղաքականություն [42]: Իրաքի դեմ պատերազմը դիտվեց նաև որպես հարմար առիթ՝ մեկ անգամ ևս ԱՄՆ-ին հավատարմություն հայտնելու համար:

Կարելի է ենթադրել, որ պատերազմի ելքը և ԱՄՆ-ի ու դաշնակիցների հետպատերազմյան վերակառուցման նախաձեռնություններն ուղղակիորեն ներազդելու են ԱՄՆ-ի և Ռուսաստանի հավակնությունների միջև մղվող պայքարի ուժգնացմանը Անդրկովկասում: Աֆղանական ռազմական գործողություններից հետո, հաստատվելով կենտրոնասիական հանրապետություններում, ամերիկյան ռազմական ներկայությունը այժմ վստահ քայլերով թափանցում է Վրաստան ու Ադրբեյջան: Դաստատվելով Ադրբեյջանում, ԱՄՆ-ը նպատակ ունի մասնավորապես չեղոքացնել ադրբեյջանական նավթահորերի նկատմամբ իրանական կողմից հնարավոր վտանգները [43]:

Ընդդիմության որոշ գործիչներ Սաղոյամ Հուսեյնի վարչակարգի դեմ տարվող պատերազմը և այդ վարչակարգի տապալումը դիտում էին որպես նախազգուշացում բոլոր ամբողջատիրական և ավտորիտար վարչակարգերին: Աղրբեջանի արտաքին գործերի նախարար Վելայար Գուլիսը գտնում է, որ եթե իրաքը պատժվել է ՄԱԿ-ի բանաձևերը չհարգելու դիմաց, ապա համաշխարհային հանրությունը պետք է ճնշում բանեցնի նաև ՀՀ-ի վրա՝ «վերջինիս կողմից ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևերը չկատարելու համար»: Չենք ցանկանում մեկ անգամ ևս մանրամասնել ԼՂ հիմնախնդրին վերաբերող 4 բանաձևերի բովանդակությունները ուղղակի արձանագրենք, որ այս անգամ պաշտոնական Բաքուն նորից փորձում է միջազգային ամեն խոշոր անցուդարձ դիտել ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման իր տեսանկյունից:

Պատերազմի սկիզբը մտահոգվելու առիթ տվեց աղրբեջանական հասարակությանը, ինչը պայմանավորված էր թե՛ բնապահպանական խնդիրներով և թե՛ այն մտավախությամբ, որ, պատերազմի պատճառով, բազմաթիվ իրաքցի ընտանիքներ կփորձեն հաստատվել Աղրբեջանի տարածքում որպես փախստականներ: Սակայն, հիմնական մտահոգությունն, իհարկե, պատերազմի ավարտից հետո իրաքյան նավթը համաշխարհային շուկա արտահանելու և դրա հետևանքով նավթի միջազգային գների անկման հեռանկարն էր, որը կարող էր հարցականի տակ դնել Բաքու-Թբիլիսի-Զեյխան խողովակաշարի նպատակահարմարությունը:

Վաշինգտոնում գործող Ռազմավարական և միջազգային հետազոտությունների կենտրոնի վերլուծության համաձայն, մեկ բարել նավթի գնի վեց դոլարով անկումը կարող է կրծատել կասպյան նավթի եկամտաբերությունը 50%-ով, իսկ տասներեք դոլար անկման դեպքում այն կդադարի եկամտաբեր լինել [13, թ. 134]:

Պատերազմի առաջին օրերին, մի քանի հեղինակավոր ֆինանսավարկային կազմակերպություններ, ինչպիսիք են Զարգացման իսլամական բանկը, Տնտեսական զարգացման քուվեյթյան հիմնադրամը, Սոցիալական և տնտեսական զարգացման արաբական հիմնադրամը, Աբու Դաբիի զարգացման հիմնադրամը, Զարգացման սաուդյան հիմնադրամը և Նավթ արտահանող արաբական երկրների հիմնադրամը հայտարարեցին Աղրբեջանում իրենց գործարար կապերի դադարեցման մասին [44]:

Որոշ ազգայնական շրջանակներ հանդես էին գալիս իրաքյան խնդրում թուրքական դիրքորոշման աջակցության կոչերով, նշելով, որ իրաքցի փախստականների թվաքանակի աճն անկայուն իրավիճակ կստեղծի երկրի ներսում: Կառավարող կառույցներին ավելի շատ ան-

հանգստացնում էր թուրքական ֆինանսական շուկայի լիակատար փլուզման վտանգը, քանզի, հաշվի առնելով թուրքական զգալի ներդրումները Աղրբեջանում և թյուրքալեզու մյուս երկրներում, դա կիանգեցներ խորը տնտեսական ճգնաժամի, այդ թվում նաև Աղրբեջանում [45]:

2003թ. օգոստոսի 13-ին, աղրբեջանական բանակի 112-րդ բրիգադը, դաշնակից զորքերի շարքում ծառայությունն անցկացնելու համար, մեկնեց Իրաք՝ հիմնականում Կարբալա շիայական սուրբ քաղաքի պատմական հուշարձանների պահպանության և անվտանգության ապահովման առաքելությամբ: Բրիգադի կազմում ներգրավված են 120 զինվոր, 14 սպա և 16 սերժանտ [46], [47]:

## 7. Ղարաբաղյան կարգավորում

2001թ. փետրվարի 21-ին աղրբեջանական մամուլը հրապարակեց ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորմանը վերաբերող ԵԱՀԿ Սինսկի խմբի կողմից 1997թ. և 1998թ. մշակված երեք առաջարկությունների բովանդակությունը, իսկ Միլլի Մեջլիսի փետրվարի 23-ին և 24-ին կայացած նիստերի ժամանակ, նախագահ Շեյխը Ալիկը այդ լուծումներն անընդունելի համարեց Աղրբեջանի համար: Ի չիք եղան նաև 2001թ. գարնանը Փարիզում և Զի Վեստում կայացած բանակցությունների ժամանակ ձեռք բերված համաձայնությունները:

Ներքաղաքական պայքարում՝ ղարաբաղյան խաղաթուղթը շարունակում է տիրապետող մնալ, դառնալով տարաբնույթ շահարկումների առարկա: Ընդդիմության համար դա կարևոր հաղթարություն է իշխանությանը մեղադրանքներ ներկայացնելու առումով, իսկ իշխանությունն, իր հերթին, վերջին երեք տարիների ընթացքում պարբերաբար հանդես է գալիս ռազմամոլ հայտարարություններով՝ հայտնելով պատերազմի միջոցով ղարաբաղյան հիմնախնդրը լուծելու իր պատրաստակամությունը: Նման պահվածքը, նախնառաջ, պայմանավորված է ներքաղաքական հաշիվներով:

Աղրբեջանում լավ գիտակցում են, որ յուրաքանչյուր պատերազմ, լինի դա նույնիսկ տարածքային ամբողջականությունը վերականգնելու կարգախոսով, լրջորեն վնասելու է նավթային ծրագրերի հեռանկարներին՝ երկրի համար բացասական կերպար ստեղծելով նաև միջազգային հանրության աչքերում: «Խավթային շանտաժի» աղրբեջանական քաղաքականությունն, ակնհայտորեն, լիակատար ձախողություն է ապրում: Մյուս կողմից, աղրբեջանական բանակն ի վիճակի չէ իրականացնելու թեկուզեկ կարճաժամկետ լայնածավալ ռազմական գործողություններ, նույնիսկ Թուրքիայի կողմից ցուցաբերվելիք ռազ-

մական և ռազմատեխնիկական օգնության պարագայում:

2003թ. ընտրությունների նախօրեին, նախագահական թեկնածուների շրջանում դարաբաղյան կարգավորման ոլորտում հետաքրքիր տարաբաժանում գոյություն ուներ: Եթե ընդդիմության հիմնական առաջնորդները (Ալի Քերիմլի, Խաս Ղամբար և այլն) հանդես էին գալիս խնդիրը խաղաղ ճանապարհով և ՄԱԿ-ի բանաձևերի հիման վրա լուծելու օգտին, ապա ընդդիմության մյուս ներկայացուցիչները, ովքեր զգալի ընտրազանգված չունեին, տուրք տալով ամբոխահած (պոպուլիստական) հայտարարություններին, կողմ էին արտահայտվում պատերազմին՝ նշելով նույնիսկ պատերազմին նախապատրաստվելու որոշակի ժամկետներ [48]:

Որքան էլ տարօրինակ է, այսօրվա Ադրբեյջանում թե՛ ընդդիմադիր և թե՛ կառավարող շրջանակները չունեն որևէ հստակ ծրագիր դարաբաղյան հարցի կարգավորման շուրջ: Ռազմամոլ հայտարարությունների և խնդիրը խաղաղ ճանապարհով լուծելու պատրաստակամության մասին հայտարարություններից զատ, ներկայիս Ադրբեյջանի քաղաքական վերնախավը որևէ կոնկրետ առաջարկներ չի արտահայտում, իհարկե, բացի հայերին միակողմանի գիշումների գնալու պահանջներ ներկայացնելուց:

## 8. Տնտեսական իրավիճակը

Այսօր, ադրբեյջանական տնտեսության հիմնական գործող ճյուղերը միայն նավթային արդյունաբերությունն ու առևտուրն են: 1998թ. նավթի գների ճգնաժամը օտարերկրյա ներդրումների ծավալի կտրուկ անկման պատճառ դարձավ: 1999թ. նկատվեց արտասահմանյան ընկերությունների ելքն Ադրբեյջանից: Հաջորդ երկու տարիների ընթացքում նրանց թիվը կազմեց շուրջ 700, ընդ որում՝ զգալի մասը՝ թուրքական ընկերություններն էին [39, ս. 416]:

Ադրբեյջանական տնտեսության հիմնական «աքիլլեյան գարշապարը» նրա չափից դուրս կախվածությունն է նավթային ոլորտից: Պետական բյուջեի 75%-ը բաժին է ընկնում նավթի և նավթամթերքների վաճառքից ստացված միջոցներին: Մնացած 25%-ը առևտուրն է և գյուղատնտեսությունը: Մինչդեռ Ադրբեյջանը, նույնիսկ այսօրվա պայմաններում, ի վիճակի չէ լիովին բավարարել նավթամթերքի պահանջարկը երկիր ներսում: Դրա վկայությունն է վերջին մի քանի տարիների ընթացքում երկրում առկա էներգետիկ ճգնաժամը [14]: Դրա պատճառներից մեկը ստվերային տնտեսությունն է: Ըստ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի տվյալների՝ Ադրբեյջանի Համախառն ազգային արտադրանքի (ՀԱԱ) մեջ ստվերային տնտեսության տեսակարար կշիռը կազմում է 65% [19, ս. 366]:

Նավթային գործոնը տիրապետող և որոշիչ դեր ունի Երկրի ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականության մեջ: Այս պատճառով, «սև ոսկով» արդյունահանումն շուրջ առկա բազմապիսի շահարկումներն ու տնտեսական ցուցանիշները պետք է դիտարկել քաղաքական իրադրության պրիզմայի միջով [49]:

Բաքու-Թբիլիսի-Ձեյհան նավթամուղի շուրջ զանազան շահարկումները՝ և մանուլի, և քաղաքական գործիչների ու վերլուծաբանների կողմից հակասական բնութագրումների ու գնահատականների են արժանանում: Դիրավի քաղաքականացված այս նախագիծը, որը խոստանում է Ադրբեյջանը վերածել «Երկրորդ Բուվեյթի», դարձել է շահարկման կարևոր թեմա և արտաքին, և ներքին քաղաքականությունն իրականացնելիս: Թեև նավթամուղի շինարարությունն արդեն սկսվել է, սակայն վերջին երեք տարիների ընթացքում միջազգային տարբեր ընկերություններ թողնում են Ապշերոնը՝ միաժամանակ տասնյակ միլիոնավոր դոլարների կորուստներ կրելով: 2003թ. ամռանը ռուսական «Լուկօյ»-ը դարձավ հինգերորդ խոշոր ընկերությունը, որը հեռացավ արդեօնական նավթային ծրագրերից: Ներկայումս, ստորագրված նավթային տասնվեց նախագծերից միայն հինգն են գործում, իսկ նախատեսված \$ 42 մլրդ.-ից ներդրվել է միայն \$ 8 մլրդ.-ը, ընդ որում՝ այդ ներդրումների 80%-ը արվել է նավթային բնագավառում [13, թ. 133]:

Ավելորդ չէ փաստել, որ 2010թ., երբ արտահանվող նավթը եկամտաբեր կլինի, Ադրբեյջանի արտաքին պարտքը կկազմի \$10-12 մլրդ., այնպես որ նավթից ստացվող եկամուտը հիմնականում կուղղվի Երկրի արտաքին պարտքի մարմանը, այլ ոչ թե տնտեսության ոլորտների զարգացմանը [16, թ. 203]:

90-ականների Երկրորդ կեսին արձանագրված տնտեսական աճի ցուցանիշներն իրականում հաջորդեցին նախորդ տարիների ընթացքում Երկրի տնտեսության իրական հատվածում արդյունաբերական արտադրության 72% և գյուղատնտեսական ոլորտում 50% անկումից հետո միայն [12]:

Այսպիսով, ածխաջրածնային արդյունաբերությունը միակ զարգացող ճյուղն է Ադրբեյջանում, իսկ չսեփականաշնորհված ճյուղերը՝ գյուղատնտեսությունը, մեքենաշինությունը և արդյունաբերության մյուս բնագավառները դուրս են մնում ֆինանսավորումից [50]:

Տնտեսական ճգնաժամն ուղղակիորեն ներազդում է սոցիալական իրավիճակի վրա, որը տարեցտարի ահագնացող չափեր է ընդունում հանատարած աղքատության և գործազրկության պայմաններում: Եկամուտների խիստ անհավասար բաշխումը, էներգետիկ ոլորտի թույլ կապը տնտեսության մյուս ոլորտների հետ և վերջիններիս համատարած փլուզումը խիստ բացասական ազդեցություն են թողնում Երկրի բնակ-

չության կենսամակարդակի վրա:

Աղրբեջանը «Երկրորդ Քուվեյթ» դարձնելու խոստումները, որոնք մի ժամանակ կարևոր տեղ էին զբաղեցնում պաշտոնական քարոզչության մեջ, փաստորեն, վստահություն չեն վայելում աղրբեջանական հասարակության լայն խավերի մոտ, քանզի վերջիններս համոզված են, որ Երկրի բնական հարստության արտահանումից շահում է միայն իշխանական վերնախավը՝ Ալիկաների ընտանիքի գլխավորությանք:

### Աղբյուրներ և գրականություն

1. Эхо, Баку, 09. 08. 2003.
2. Igor Rotar, Islamic Fundamentalism in Azerbaijan: Myth or Reality?, Prism, Jamestown, vol. 6, No. 8, August 31, 2000.
3. Tadeusz Swietochowski, Azerbaijan: The Hidden Faces of Islam, World Policy Journal, vol. XIX, No. 3, Fall 2002, pp. 74-75.
4. Зеркало, Баку, 04. 09. 2003.
5. Али Аббасов, Ислам в современном Азербайджане: образы и реалии, в сборнике «Азербайджан и Россия: общество и государства», под ред. Д. Е. Фурмана, М., 2001, с. 296.
6. Россия и Закавказье: реалии независимости и новое патрнерство, М., 2000, с. 109.
7. Ирада Гусейнова, Беженцы, их положение и роль в современном азербайджанском обществе, в сборнике «Азербайджан и Россия: общество и государства», с. 328.
8. Шахин Аббасов, Фарид Гахраманлы, Азербайджан: выборы и власть, Центральная Азия и Кавказ, 2002, №. 6 (24), с. 40.
9. Россия и мусульманской мир, Бюллетень реферативно-аналитической информации, М., №. 8 (110), 2001, с. 3.
10. Независимая газета, М., 01. 12. 2003.
11. Ариф Юнусов, Миграция постсоветского Азербайджана, в сборнике «Мировая экономика и международные отношения», М., 2002.
12. Мусават, Баку, №. 15 (15), 13. 08. 2003, с. 24.
13. Alec Rasizade, Azerbaijan Descending into the Third World After a Decade of Independence, Comparative Studies of South Asia, Africa and the Middle East, vol. XXII, No. 1-2, 2002.
14. Независимая газета, 03. 02. 2000.
15. С. И. Чернявский, Новый путь Азербайджана, М., 2002.
16. Зураб Тодуа, Азербайджанский пасъянс, М., 2001.
17. Известия, М., 27. 03. 2003.
18. Ավելի մանրամասն տես Daniel Heradstveit, Democratic Development in Azerbaijan and the Role of the Western Oil Industry, Central Asian Survey, vol. 20, No. 3, 2001, pp. 261-288.

19. Губад Ибадоглы, Издержки «переходного» периода в Азербайджане, в сборнике «Азербайджан и Россия: общества и государства».
20. The New York Times, 25. 08. 2003.
21. The Washington Post, 25. 08. 2003.
22. Յրամանագրի շարադրաբըլ տեսՆациональные истории в советском и постсоветских государствах, М., 1999, с. 403-404.
23. Ավելի մանրամասն տես Գ. Դемоян, Л. Мелик-Шахназарян, Ходжалинское дело: особая папка. Ереван, 2003.
24. Зеркало, 13. 08. 2003.
25. 525-я газета, Баку, 24. 09. 2002.
26. Зеркало, 14. 03. 2003.
27. Зеркало, 11. 06. 2003.
28. История Азербайджана. Учебник для 11-го класса общеобразовательной школы, Баку, 2002, с. 86-103.
29. Зеркало, 27. 12. 2001.
30. Зеркало, 26. 08. 2003.
31. Зеркало, 26. 03. 2003.
32. Независимая газета, 05. 04. 2003.
33. Зеркало, 27. 03. 2001.
34. Зеркало, 27. 12. 2002.
35. Эхо, 13. 02. 2003.
36. Эхо, 03. 08. 2003.
37. Anar Valiyev, Azerbaijani-Turkmen Relations: Quarreling Brothers, Central Asia - Caucasus Analyst, July 31, 2002.
38. Независимая газета, 02. 03. 2000.
39. Тогрул Джуварлы, Азербайджанская нефть: поиски равнодействующей, в сборнике «Азербайджан и Россия: общества и государства».
40. Независимая газета, 11. 04. 2000.
41. Известия, 29. 03. 2000.
42. Зеркало, 29. 03. 2003.
43. Stephen Blank, The Post-Soviet States and the Post-Saddam Middle East, Middle East Review of International Affairs, vol. 7, No. 2 (June, 2003), p. 60.
44. Независимая газета, 24. 03. 2003.
45. Независимая газета, 12. 03. 2003.
46. Монитор, Баку, 16. 08, 2003, с. 4.
47. РИА Новости, 13. 08. 2003.
48. ANS TV, Բարոյ, 18. 08. 2003:
49. Независимая газета, 01. 10. 1999.
50. Azerbaijan. CIU Country Report, The Economist Intelligence Unit, London, March 2002.

Աղյօմքերի 24, 2003թ.

## АЗЕРБАЙДЖАН: НОВЫЕ ВЫЗОВЫ В 21-ОМ ВЕКЕ

Гайк Демоян

### Резюме

После приобретения независимости, Азербайджан пережил несколько переворотов и попыток переворотов, которые сотрясли внутреннюю стабильность страны. После прихода к власти Г. Алиева, ситуация в Азербайджане стала относительно стабильной, благодаря авторитарной власти азербайджанского президента. Между тем, многие жизненно важные вопросы для азербайджанского государства, такие как экономическая диверсификация, улучшение социальных условий, карабахское урегулирование, и т. д., все еще остаются нерешенными.

Конец эпохи Г. Алиева рождает множество вопросов относительно будущего республики. Более того, существует реальная возможность внутренней нестабильности и столкновение различных политических и социальных групп в случае ослабления государственного контроля.